№ 47 Հինգշաբթի Ապրիլի 21 1888 Հինգշաբթի Ապրիլի 21 № 47

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց եկեղեցական ընտրութիւնները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի արտասանական յանձնաժողովը. Նամակ Փօթիից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քաղաքական տեսութիւն. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ՖԵԼԻԵՏՕՆ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսի Հայոց եկեղեցիներում չորս տարին մի անգամ ընտրվում են երեսփոխաններ, որոնք միասին գումարվելով, ընտրում են Ներսիսեան Թեմական դպրոցի հոգաբարձուներին։ Բացի սրանից ամեն մի եկեղեցու ծուխը երեք տարին մի անգամ ընտրում է իր եկեղեցու երեցփոխ։

Մինչև 1884 թիւը այդ ընտրութիւններին, բացի եկեղեցու ծուխից, մասնակցում էին միշտ և եկեղեցու ժամաւորները։ Եւ 1884 թւին Թիֆլիսի Թեմի առաջնորդական յանձնաժողովը հրատարակեց մի մանրամասն „Հրահանգ“, որի Գ. յօդուածի ծանօթութիւնը վաւերացնում է ժամաւորների իրաւունքը ծխականների հետ միասին մասնակցել եկեղեցական բոլոր ընտրութիւններում։

Բայց նոյն 1884 թւին Թիֆլիսի հայոց եկեղեցիներից մի քանիսներում տեղի ունեցան երեցփոխների ընտրութիւններ, որոնց ժամանակ յայտնվեցաւ հետևեալը. մի խումբ մարդիկ, եկեղեցու իրանց ժամաւոր անուանելով, ներկայանում են եկեղեցական երեցփոխի ընտրութեան ժամանակ, քուէարկում են ծխականների հետ միասին, և ընտրողների մեծամասնութիւն կազմելով, ընտրում են իրանց ուզած երեցփոխ, այնուհետև նոյն մարդիկ ուղևորվում են մի այլ եկեղեցի և այնտեղ էլ ներկայանալով որպէս եկեղեցու ժամաւորներ, նմանապէս մասնակցում են երեցփոխի ընտրութեանը, ձնշում գործելով ընտրութեան վրա իրանց ձայների մեծամասնութեամբ։

Ցայտնի է, որ ամեն մէկը մեզանից քաղաքի մի եկեղեցու ծխական լինելով, մի և նոյն ժամանակ մի այլ եկեղեցու ժամաւոր է։ Այդպիսով եկեղեցական ընտրութիւնների ժամանակ, եթէ ուզենանք կարող ենք ի չար գործածել մեր ոյժը. օրինակ Վանքի մայր-եկեղեցու ծխականը կարող է մասնակցել համ այդ եկեղեցու ընտրութիւններում, որպէս ծխական, համ Քամոյենց եկեղեցու Մողնու եկեղեցու ընտրութիւններում որպէս ժամաւոր։ Ընտրողական իրաւունքի այդ զեղծումը տեսնելով, Թեմիս առաջնորդը ստիպվեցաւ այդ զեղծումներին առաջն առնելու համար, նոյն 1884 թւին, երբ հրատարակվեցաւ վերև յիշված „Հրահանգը“ անմիջապէս (կրկնում ենք նոյն 1884 թւին) հրատարակել և մի լրացուցիչ „Շրջաբերական“ որի մի յօդուածով (Զ. յօդ.) արգելվում է առհասարակ ժամաւորների մասնակցութիւնը ծխականների հետ միասին եկեղեցական ընտրութիւններում, իսկ մի այլ յօդուածով (ԺԸ. յօդ.), խափանվում է „Հրահանգի“ Գ. յօդուածի ծանօթութիւնը, որի հիման վրա երեցփոխի ընտրութեան մէջ կարող էին մասնակցել և ժամաւորները։

Մնացած մասերում „Հրահանգը“ ամբողջապէս պահպանել է իր ոյժը։

Ուրիշ կերպ չէր կարող անել Թեմիս սրբազան առաջնորդը, քանի որ տեսնում էր թէ ամեն եկեղեցական ընտրութիւններում մարդկանց խմբեր, տաս, տասն և հինգ, քսան հոգուց բաղկացած՝ իրանց այս ու այն եկեղեցու ժամաւոր անուանելով, անընդհատ թափառում էին քաղաքիս մի եկեղեցուց դէպի միւս եկեղեցի, ամեն տեղ ներկայանում էին որպէս ժամաւորներ, ի հարկէ ժամաւոր էլ չը լինելով, և ճնշում էին գործում ծխականների ընտրութիւնների վրա։

Բանը նոյն իսկ դրանումն է, որ եկեղեցու ծխական լինելը կարելի է վերաստուգել, քանի որ ծխականները գրված են կամ պէտք է գրված լինեն եկեղեցու մատեաններում, իսկ ժամաւորները ոչ մի տեղ արձանագրված չեն և ամեն մի քաղաքացի անարգել կարող է իրան ժամաւոր անուանել թէկուզ քսան եկեղեցու։

Թոյլ տալ ժամաւորներին մասնակցել եկեղեցական ընտրութիւններում՝ կը նշանակէ իսպառ խախտել բուն ծխականների եկեղեցական ընտրութեան անբռնաբարելի սկզբունքը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Կ. Պոլսի «Արևելք» լրագիրը հաղորդում է. «Երէկ (ապրիլի 6) Ղալաթիոյ խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ «Հայկական քանի մը տառերու հնչումը ճշդելու համար կազմուած Ցանձնաժողովոյ» երրորդ նիստը։ Բացակայ էր միայն դեր. Գարեգին եպիսկ. Սրուանձտեանց։»

«Սոյն նստի մէջ կրկնուեցան արդէն յայտնուած կարծիքներն։ Արարատեան հնչման կողմնակիցները ըն էին, որպէս անցեալ նիստերուն ևս, բացի Մ. Էֆ. Գարագաշեանէ և արժ. Յովհ. քահանայ Ցիւնքեարպէյնտեանէ, ժողովոյ միւս բոլոր անդամներն։ Ուսումնական խորհրդոյ ատենապետ տոքտ. Թիրեաքեան էֆ. փափագ յայտնեց, որ ժողովը վերջնական եզրակացութեան մը յանգի այս նիստին մէջ։ Բայց որովհետև ժողովոյ բոլոր անդամք համակարծիք չէին, ուստի պ. Գր. Նիկողոսեան յայտնեց թէ այս խնդրոյ լուծումն աւելի կէիր և հեղինակութիւն կունենայ եթէ Ցանձնաժողովը իր վերջնական եզրակացութեան յանգելէ առաջ՝ սոյն խնդիրը ներկայացնէ ազգային բոլոր գիտնական հաստատութեանց, որպէս Էջմիածնայ, Երուսաղեմայ (?) Վենետկի և Վիէննայի Միաբանութեանց, Էջմիածնայ Գէորգեան ճեմարանին, Մոսկուայի Լազարեան ճեմարանին, Թիֆլիսի Ներսիսեան դըպրոցին և ականաւոր հայագիտաց՝ որպէս են Էմին, Պատկանեան, Այտընեան, Ալիշան, Միքայէլ Փորթուգալեան, Յովհաննէս Սազը և այլն, նոյնպէս և լրագրաց միջոցաւ խնդրէ բոլոր գաւառահայ բանասէրներէն, որպէս զի բարեհաճին ուսումնական խորհրդոյն ուղարկել իրենց երկիրներու հասարակ ժողովրդեան բուն հնչումները, փոխադարձ լատինական տառերով։

«Սոյն առաջարկութիւնն ընդունուեցաւ մեծամասնութեան կողմէն և որոշուեցաւ առանձին գրութեամբ հաղորդել զայն Ուսումնական Խորհրդոյ։»

Ահա ուրեմն Կ. Պոլսոյ «Արտասանական Ցանձնաժողովի» վճիռը։ Որքան և մեզ զարմանալի երևար այն կէտը, որ Ցանձնաժողովն իր անդամների մեծամասնութեամբ թէ ընդունում է ռուսահայոց արտասանութեան՝ բուն հայկական այսինքն Մեսրոպեան հնչման հետ համաձայնութիւնը և թէ դանդաղում է, չէ համարձակվում իւր որոշումն հրապարակաւ յայտնել, բայց մենք ուրախ ենք, որ սա մի առիթ եղաւ, որ աշխարհիս զանազան կողմերը ցրուած մեր յայտնի միաբանութիւններն և գիտնականներն իրենց մենացեալ դիրքից հանվում և մի տեսակ ընդհանուր, համազգային շարժման մէջ են դրվում, հրաւիրվում են չօշափել այնպիսի հարց, որ հետաքրքրում է որպէս արևմտեան, նոյնպէս արևելեան և այլ կողմանց հայերին։ Թէ ինչ կը լինի այս համազգային ուսումնական քուէարկութեան արդիւնքը—դեռ կանուխ է դուշակել, թէպէտև մենք հակված ենք կարծելու, որ գէթ ըստ երևոյթին, դարձեալ կը յաղթանակեն արարատեան (Մեսրոպեան) հնչման կողմնակիցները։ Լաւ կըմբռնեն անչուշտ մեր այն հաստատութիւններն և ուսումնականներն, որոնց քննութեանը պիտի յանձնվի խնդիրն, որ լեզուական միութիւնը՝ որի հիմն է հնչման համաձայնութիւնը՝ մեծ ոյժ կուտայ հայոց զանազան կողմերի հասարակութեանց բարոյական միութեան կապերին, բայց միանգամայն այդ համաձայնութեան կենտրոնը պիտի լինի այնպիսին, որի հեղինակութիւնը ճանաչեն թէ արևմտեանք և թէ արևելեանք—և այդ կենտրոնը Մեսրոպն է։

Ինչպէս ամեն նորութիւն՝ այդպէս և այս արտասանութեան յեղափոխութիւնը սարսափեցնում է մեր Կ. Պոլսոյ դրագէտների մի յայտնի տեսակին, որոնք մեր հնչումը աշխատում են որքան կարելի է հրէշային կերպարանքով ներկայացնել ընթերցող հասարակութեան։ Այսպէս մէկը ասում է թէ եթէ Մեսրոպեան հնչման հետևենք և Իւթիւճեանի առաջարկութիւնն ընդունենք, այսուհետև մեր եկեղեցիների մէջ փոխանակ «փառք ի բարձունս» (parki-partzouns) ասելու «Ֆառք ի պարծունս» (bardzouns) *) պիտի հնչեն սարկաւագները և ժողովուրդը սարսափած պիտի կարծէ թէ օտար եկեղեցի է մտած և ահիւ դողիւ դուրս փախչի.... մի ուրիշը զգուշացնում է իր բարեկամին, որ արթուն կենայ, ծուղակի մէջ չը պատատի վասն զի «Գրերու հնչումներն փոխելէ յետոյ՝ կարգն կուգայ քերականութեան։ Բայց քա՛ Ցէր

*) Աւելորդ է բացատել, որ լատինական բառերը շարված են ըստ ըմբռնման Կ. Պոլսեցոց։

ՖԵԼԻԵՏՕՆ

Հայի արդիւնաբերած համաշխարհային գաղափարը.—Ապրիլի 10-ը և ընտրողական սկզբունքի նոր ձևը.—Գէորգ Աքիմեան և Ժիւլ Գրէվի.—Քամոյենց եկեղեցու ընտրութիւնները.—Գործնական ազգ ենք.—Ինչպէս ենք վերաբերվում դէպի պաշտօնական ծառայութիւնը և դէպի ազգային գործերը.—Թիֆլիսի «Փոխադարձ Կրեդիտի» ընկերութիւնը.—Ոչ միայն դէպի կենդանի մարդիկ, բայց և դէպի մեռեալները անպատկառ ենք վերաբերվում.—Հայոց լեզուի հնչումները.—Իւթիւճեան և Մխիթարեանները.—Հայի յատկանիշը.—Հայ բըժիշկը, հայ ադվոկատը և հայ հեղինակը.—Հայի յատկանիշը և հրէայ ձուկ ծախողի մասին անեկդոտը.—Ամեն բանում ցուցամոլութիւն.

—

Ասում են որ հայերը երբէք չեն արդիւնաբերել այնպիսի գաղափարներ, որոնք կարող լինէին համաշխարհային համարվել, կարող լինէին ամբողջ մարդկութեանը աւետել մի որ և է նոր սկզբունք։

Այո, եթէ մինչև այժմ այդպէս է եղել,—ներկայ թւի ապրիլի 10-ից սկսած՝ ամեն բան կը փոխվի։ Այդ օրից ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը կը ճանաչի հայերին, այդ օրը մի նշանաւոր օր է մեզ համար, այդ օրը մենք հայերս աւետեցինք ամբողջ մարդկութեանը մի նոր հասարակական սկզբունք, որին վիճակված է պայծառ ապագայ ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան մէջ....

Այդ սկզբունքն է՝ ընտրողական պաշտօնների անպատասխանատուութիւնը և ընտրողական պաշտօններում ցմահ անփոփոխ մնալը....

Եւ գիտէք ո՞վ է այդ սկզբունքի յայտնողը....

Գէորգ Աքիմեան, հեռագրատան և փոստի վարչութեան մէջ ծառայողը, Ներսիսեան դպրոցի հոգաբարձուն, մեծ Աբովեանցի աշակերտը, Դօրպատի համալսարանի ուսում չաւարտած ուսանողը, Պետրոս Սիմէոնեանցի և ընկ. Ֆիրմայի Թիֆլիսի բաժնի գործակալը և այլն և այլն....

Եւ զարմանալի է, որ յիմար եւրօպացիք մինչև այժմ չը հասկացան որքան յարմար է ընտրողական պաշտօններում անպատասխանատու և անփոփոխ լինելը։ Հիմա յիմար ֆրանսիացիք, լսելով Գէորգ Աքիմեանցի բերանով մարդկութեանը աւետած հրաշալի, յարմար և գործնական սկզբունքը, իրանց մատը կը կծեն....

Ֆրանսիայի հանրապետութեան նախկին նախագահ Ժիւլ Գրէվի հիմա կասի՝ «Ինչ իշիգլուխ եմ եղել ես, որ թոյլ եմ տուել ընտրողներին ինձանից հաշիւ պահանջել ու իմ տեղը Սադի Կարնոյին ընտրել.... Եթէ ես առաջ ճանաչած լինէի Գէորգ Աքիմեանին, ես անպատճառ այնպէս կանէի, ինչպէս նա է արել ապրիլի 10-ին Թիֆլիսի Քամոյենց եկեղեցու երեցփոխի ընտրութեան ժամանակ.... Ես կասէի՝ «չեմ ուզում հաշիւ տալ ընտրողներին, չեմ էլ ուզում նախագահի պաշտօնից հեռանալ.... Մթթէ չէք յիշում, որ ես երևելի ադվոկատ եմ եղել, օգտաւէտ պըրօէկտներ առաջարկող ազգային ժողովի պատգամաւոր եմ եղել, ազգային ժողովի նախագահ եմ եղել,—և այժմ դուք այն աստիճան ապերախտ էք դէպի իմ մատուցած ծառայութիւնները, որ ուզում էք փոխել ինձ, ինձանից հաշիւ էք պահանջում, իմ տեղը մի որ և է Կարնոյին էք ուզում ընտրել.... Չէ՛, չէ՛, ես ոչ հաշիւ կը տամ ձեզ, ոչ էլ կը հեռանամ իմ պաշտօնից, ինչ ուզում էք արեցէք.... Եւ վերջապէս ո՞վքեր էք դուք, որ պէտք է ինձ քուէարկէք, ո՞վքեր էք դուք, որ պէտք է ինձանից հաշիւ պահանջէք ու հաշիւներս վերաքննէք.... nomina sunt odiosa, բայց այնու ամենայնիւ ինձ հետ, երևելի Ժիւլ Գրէվիի հետ համեմատվելով՝ դուք ուրիշ բան չէք, եթէ ոչ հասարակ գեադներ.... Non, non.... j'y suis et j'y reste».

***

Բայց խեղճ Գրէվի այդ չասեց, ենթարկվեց ընտրողների կամքին և նրա տեղը ուրիշին ընտրեցին, որովհետև ողորմելին չը գիտէր թէ կայ աշխարհիս երեսին, այն էլ հայոց ազգի մէջ, մի երևելի և հնարագէտ մարդ՝ Գէորգ Աքիմեանց, որ աւետեց մարդկութեանը մի նոր, բարձր, անանման սկզբունք, այն է նիւթական հաշիւների անձեռնամուխ լինելը, ընտրողական պաշտօնում ցմահ անպատասխանատու և անփոփոխ մնալը։

***

Ասված է, որ հայերը գործնական ժողովուրդ են, ուրեմն եթէ մի օր հայերը դուրս գալով իրանց դարևոր տգիտութիւնից, կը սկսեն լուսաւորվել, քաղաքակրթվել, կերթան, օրինակ, Դօրպատի համալսարանը և այլն,—նրանք անպատճառ կը սկսեն աւետել մարդկութեանը շատ գործնական և յարմար հասարակական սկզբունքներ, ինչպէս օրինակ հետևեալը. «Ինչ որ իմն է, հո իմն է, իսկ ինչ որ քոնն է,—նոյնպէս իմն է»։

Ինչ լաւ բան է....

***

Երբ որ մի անգամ մի ֆելիետոն գրեցի, որտեղ գրչովս նկարագրեցի Ներսիսեան դպրոցի նոր ընտրած հոգաբարձուների պատկերները, ի միջի այլոց և Գէորգ Աքիմեանցին, աւելացնելով թէ նա կը մեռնի այն օրը, երբ այլ ևս հոգաբարձու կամ զանձապահ չի ընտրվի,—այն ժամանակ անմեղ հանաք էի անում, մեծ նշանակութիւն չը տալով սեփական խօսքերիս.... Իսկ այժմ բոլորս համոզվում ենք, որ Գէորգ Աքիմեան ճշմարիտ այն մարդն է, որ երբէք չէ ուզում հեռանալ որ և է սնդուկից։

Զարմանալի վիճակ ունեն մեր այդպէս անուանված ազգային կամ եկեղեցական գործերը։ Ամեն մարդ դրանց գլխին «կակալ է կոտրում»։ Հօ նոյն Գէորգ Աքիմեան, որ ձմեռը Թիֆլիսում տելեգրաֆիստ է, իսկ ամառը Կոջորում փոստային և հեռագրական կայարանի կառավարիչ է, երբէք չի համարձակվի փոստային շրջանի կառավարչին ասել՝ «Ինչպէս էք համարձակվում ինձանից հաշիւ պահանջելու, մինթէ այդ-

փրկեսցէ ի փորձանաց։ Ոչ միայն հնչումիս կը կորուսանենք այն ատեն, այլ և ինտէլիդէնցիանիս կը չփոթեցնենք» և այլն։ Վերջապէս գործը հասցրին մինչև այն կէտը, որ «ազնիւ հաչացողներին» յորդորում են օգուտ քաղել առթից և աճապարել գնել պ ա ս տ ի լ յ ժ է ր օ դ է լ (Pastilles Geraudel) վասն զի՝ արարատեան արտասանութիւնը ընդունվելուց վերջ, այդ դեղի անունը՝ պիտի դրվի եղել պ ա ս տ ի ղ ղ ե ա յ ք Ցե ր ա ւ դ ե ղ և իր այդ անթափանցելի անուան ներքև անծանօթ պիտի մնայ եղել թէ դեղագործներին և թէ յաճախորդներին....

Մենք գիտէինք, թէ Կ. Պոլսոյ այդ կարգի գրաղէտները շատ բ ա ր ի բ ա ր ի յատկութիւններ ունեն, բայց թէ այդ աստիճանի զուարճալի սրախօս են.... այն չը գիտէինք. այսուհետև այս տեսակէտով կը դիտենք նրանց....

Ա. Սարուխանեանց

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

Ապրիլի 10-ին

Փօթի թէև ամենափոքր նաւահանգիստն է Անդրկովկասում, բայց այժմ բովանդակում է իր մէջ 100-ից աւելի պանտուխտ հայ մշակներ, որոնք եկած են Թիւրքաց Հայաստանի զանազան գաւառներից. սրանց թիւը այս տարի հետզհետէ զգալի կերպով է ստուարանում Թիւրքիայի անձուկ դրութեան պատճառով։ Ցեղիս հայ մշակները զբաղվում են գլխաւորաբար բեռնակրութեամբ ձմեռ ժամանակ, իսկ ամառը մասնաւորապէս մարգանէցի (սև քար) գործով։ Այստեղի հայ մշակների տոկունութիւնը և անխոնջ աշխատութիւնը խիստ զարմանալի են, մանաւանդ մարգանէցի գործի վերաբերմամբ, որ պահանջում է երկաթի նըման ֆիզիկական կարողութիւն և համբերութիւն։ Հայ մշակը ամեն տեղ իրաւամբ նկատված է ամենադժուար և տաժանակիր աշխատութիւնների համար յարմարաւոր գործիք իր յարատև անխոնջ գործունէութեամբ, անդրդուելի կամքով և համբերութեամբ. սրա այս յատկութիւնը իրաւամբ գովեստների կարժանանար, եթէ նա դիտենար օգուտներ քաղել իր դառն աշխատութիւններից, և անօգուտ տեղ չը փչացնէր այն մի քանի կոպէկները, որ իր քրտինքով հազիւ թէ աջողում է ձեռք բերել։ Հայ մշակը իր տգիտութեան պատճառով սովոր է միշտ իր բովանդակ մտածումները միայն կենտրոնացնել ապրուստի այն նեղ շրջանակի վրա, որ բովանդակում է միայն առօրեայ ապրուստի պէտքերը, նա չը գիտէ լուրջ շրջահայեցողութեամբ նկատել իր ներկայի կարիքները, մի և նոյն ժամանակ ուշադրութիւնից չը վրիպեցնել նաև իր ապագան, վերջապէս չը գիտէ նա թէ իր այդ դրութիւնը ապագայում մեծամեծ վտանգների կենթարկէ իրան և թէ նա մի օր այդ երկաթեայ ուժից զրկվելով՝ ակամայ կը դատապարտվի անգործութեան։ Այն ժամանակ նա հացի և ապրելու պէտք պիտի ունենայ։—

Եթէ մշակների դասը տնտեսագիտութիւնը և խոհեմութիւնը կեանքի անվրէպ ուղեցոյց բռնելով ընթանայ՝ ըստ ամենայնի ապահովված կը լինի նրա դրութիւնը թէ հայրենիքում և թէ օտարութեան մէջ. այն ժամանակ արտաքին ամեն տեսակ ճնշումներ չեն կարող ընկճել և քայքայել նրա դրութիւնը, ուստի մի անգամ պանդխտութեան դիմելուց յետոյ, եթէ դժբաղդութեան և ձախորդութիւնների չը հանդիպի, անշուշտ կարող է այնպէս հիմնաւոր կերպով բարւոքել իր կացութիւնը նիւթական միջոցներով, որ կը կարողանայ ընդ միշտ անբաժան մնալ իր հայրենական հողի և տան հետ։

Ընկերական կազմակերպութիւնը մի անհրաժեշտ պայման է մանաւանդ տեղիս հայ մշակների նկատմամբ. եթէ նրանք միութեամբ, սիրոյ և համերաշխութեան սերտ կապով կապված լինէին միմեանց հետ, իրար շահերը ի նկատի ունենալով չը ձգտէին միմեանց վնասել, ինչպէս որ սովոր են, այն ժամանակ նրանց դրութիւնը աւելի ապահով կը լինէր։

Փօթիի մշակների դրութիւնը այժմ բաւական ցաւալի է, որովհետև այս տարի տեղիս գործերը ուրիշ տարիների համեմատութեամբ՝ խիստ սակաւ են, որի պատճառով դրեթէ հայ մշակների մեծագոյն մասը անգործութեան դատապարտված, իրանց կեանքը մաշեցնում են սրճարանների մէջ, զանազան վնասակար զբաղմունքներով։ Այս պարագայի մէջ իրաւամբ գովեստների արժանի է պ. Տ. Խուցեան, որ իր այստեղ գալու օրից մինչև այժմ չէ դադարել ջանքեր գործ դնել յօգուտ պանդուխտ թշուառ հայ մշակների, և այժմ էլ մտադիր է մշակների մի ընկերութիւն կազմել, և այդ ընկերութեան միջոցով գոյանալի դրամագլուխը գործածել այն պանդուխտների օգտին, որոնք կենթարկվեն զանազան վտանգների և կամ զոհ կը դնան դժբաղդութիւններին։ Երանի թէ տեղիս հայ վաճառականները և քաղաքիս վարիչները չը դանայլն իրանց ջանքերը պ. Տ. Խուցեանի ջանքերի հետ միացնել ի նպաստ պանդուխտ հայ մշակների և անտարբերութեամբ հեռուից միայն չը դիտէին իրանց համարիւնների վիճակը։

Հ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ջատկի տօների պատճառով «Մշակի» հետևեալ 48-որդ համարը կը հրատարակվի հինգշաբթի, ապրիլի 28-ին։

Տեղական ռուս լրագիրները լսել են, որ երիտասարդ օֆիցէր Պէկարսկուն սպանող տիկին Նիկիֆորովա այժմ յայտնել է քննիչին, որ նա պատահմամբ և անգիտութեամբ է սպանել Պէկարսկուն։ Իր ասելով նա ուզեցել է միայն անձ-

---

քան ապերախտ էք դէպի ինձ, որ չը նայելով թէ ես 20 տարուց աւելի ծառայում եմ, դուք դեռ ինձ չէք հաւատում ու ինձանից հաշիւ էք պահանջում»։ Այդ բանը նա չի ասի, որովհետև գիտէ թէ այդ տեսակ պատասխան տալուց յետոյ անմիջապէս կարձակվի ծառայութիւնից և այդ պատճառով իր ծառայութեան մէջ ճիշդ ամեն շաբաթ, գուցէ և ամեն օր հաշիւ է տալիս իր մեծաւորին հեռագիր ու պատուիրած նամակներ ուղարկողներից ստացած փողերի մասին։

Իսկ ազգին, ընտրողներին ինչ հարկաւոր է նոյնպէս մեծաւոր համարել, ով է ազգի «ռեխին նայողը»..... մի անգամ ընտրվեցայ,—փառք Աստուծոյ.... և այնուհետև տեղիցս շարժվողը չեմ, մանաւանդ որ պատրաստութիւններս էլ տեսայ և լաւ կապեր հաստատեցի Սիմէօնեանցի և ընկ. կենտրոնական ֆիրմայի հետ.... Հեռագրատանը, ի հարկէ, պէտք է ամեն մի բօպէին հաշիւ տամ մեծաւորիս, եթէ ոչ տեղիցս կը զրվեմ, իսկ ազգային եկեղեցու երեցփոխ լինելով կարող եմ վեց տարի շարունակ ոչ մի հաշիւ չը տալ և երբ իմ տեղը ուրիշին են ընտրում, կասեմ՝ «չեմ ուզում հեռանալ, պրծաւ գնաց։»

Պարզ, հասկանալի, և մանաւանդ յարմար։

* * *

Ամեն տարի լինում է Թիֆլիսի «Փոխադարձ Կրէդիտի» ընկերութեան ընդհանուր ժողովը։ Այդ ժողովի ժամանակ ընկերութեան անդամները միշտ ընտրում են վերաքննող յանձնաժողով բանկի հաշիւները քննելու համար։ Բացի սրանից յայտնի ժամանակամիջոցներում ընտրվում են՝ նոր կառավարիչը և դիրեկտորները։

Ի՞նչ կասէիք դուք, եթէ բանկի վարիչները, դիմելով ժողովի ժամանակ ընկերութեան անդամներին, յանկարծ ասէին. «Ուրեմն դուք մեզ չէք հաւատում և այն աստիճան ապերախտ էք դէպի մեր ծառայութիւնը, որ ուզում էք բանկի նոր կառավարիչ և նոր դիրեկտորներ ընտրել... Ոչ, մենք մեր պաշտօնից չենք հեռանայ.... Եւ վերջապէս ովքեր էք դուք, որ մենք ձեզ ու ձեր ընտրած վերաքննող յանձնաժողովին հաշիւ տանք....»

Բայց «Փոխադարձ Կրէդիտի» ընկերութեան վարիչները այդ չեն ասում և չեն կարող ասել, որովհետև բանկը ունի իր հաստատված կանոնադրութիւնը, որին պէտք է ենթարկվեն բանկի վարիչները։

Իսկ եկեղեցական գործերում կարելի է կամայական կերպով վարվել։

* * *

Առհասարակ մենք հայերս վարվում ենք sans cérémonie ոչ թէ միայն կենդանի մարդկանց հետ, բայց նոյն իսկ և մեռածների հետ էլ։ Հարկաւոր ժամանակ անհանդիստ ենք անում նոյն իսկ մեռեալների ոսկորները։

* * *

Կարելի է կամայական կերպով վարվել և հայոց լեզուի հետ էլ։ Այժմ ամեն տեղ, որտեղ ուսումնական հայեր կան, ահագին աղմուկ է հանել «Մշակի» յարուցած միտքը հայոց այբուբէնի տառերը ճիշդ և հնդերոպական լեզուների հնչման համեմատ արտասանելու մասին։

Կ. Պոլսի «Մասիս» լրագրի նախկին խմբագիր պ. Իսթիւճեան, մեր կողմն է, թէև չէ ուզում խոստովանվել, որ «Մշակին» է պատկանում հարցի նախաձեռնութիւնը, այլ այժմ ինքն հանդէս է դուրս գալիս որպէս հարցի ինիցիատոր, թէև մենք 15 տարի է արդէն, որ բողոքում ենք հայոց տառերի անճիշդ կերպով արտասանելու դէմ, իսկ ինքն պ. Իսթիւճեան, որ այժմ յանկարծ ջերմ պաշտպան է հանդիսացել հայոց տառերի մեսրոպեան արտասանութեան, մինչև այսօր իր բոլոր գրուածներում և լրագրում հետևում էր ոչ թէ այդ մեսրոպեան արտասանութեան, այլ հոսոսական արտասանութեան։ Նա էր, որ մինչև այժմ գրում էր Կամպեթթա, Կառիպալտի, Պէռլին, Գառնօ և այլն և այլն։

Բայց այնու ամենայնիւ հայոց տառերի հնչումները վերաքննելու համար Կ. Պոլսում բացված յանձնաժողովին Իսթիւճեանի կողմից նորերումս ներկայացրած զեկուցման մէջ շատ հետաքրքիր և ուսանելի տեղեկութիւններ կան։ Ցայտնվում է, որ Մխիթարեանները սկզբից շատ կանոնաւոր կերպով և մեսրոպեան արտասանութեան համեմատ էին արտասանում բոլոր հայոց տառերը, օրինակ Ancona գրում էին ճիշդ կերպով Անկոնա, Berlin գրում էին Բերլին, Wurtemberg գրում էին Վիւրտէմբերգ և այլն և այլն.... Բայց տարիների ընթացքում սկսեցին ոչ թէ միայն խառնուշփոթել և աղաւաղել հայոց տառերի նասպանութիւն գործել, բայց չիմանալով վարվել ըէվօլվերի հետ,—անգիտութեամբ է արձակել ըէվօլվերը և գնտակը հակառակ կողմն է գնացել։

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը։ «Այն անձինք, որոնք թարգմանում են, կամ արդէն թարգմանած ունեն Տուրգէնէվի «Накануне» վէպը, թող բարեհաճեն այդ մասին հաղորդել «Մշակի» խմբագրութեանը, որպէս զի այդ վէպը թարգմանել ցանկացողները այլ ևս ձեռնամուխ չը լինեն յիշեալ վէպի թարգմանութեանը։»

—

ԲԱԳՈՒԻ Սուրբ Լուսաւորիչ եկեղեցու լուսաբար Համբարձում Տէր-Աստուածատուրեանց խնդրում է մեզ տպագրել հետևեալը։ «Ձեր լրագրի 38-որդ համարի ներքին լուրերի բաժնում կարդալով Բագուից երկու քահանայացուների մէկից ստացած կեղծ նամակը, ես այնքան չը զարմացայ այդ կեղծ նամակի վրա, որովհետև գիտեմ թէ դրա հեղինակը այնպիսի վարպետ մարդ է, որ ինչ ասես նրա ձեռքից դուրս կը գայ, որքան այն հանգամանքի վրա՝ թէ ինչպէս զանազան ստորագրութիւններով կեղծ նամակներ պատրաստողը կարողանում է սխալեցնել խմբագրին, «Մշակին» վնասելու դիտաւորութեամբ։ Դա առաջին անգամ չէ, որ թշնամին դարանը մտած՝ ձեր լրագրին վնասել է ուզում, կեղծ լուրեր և կեղծ նամակներ ուղարկելով ձեզ։ Թէև աւելորդ էր յիշեալ գրուածքին պատասխանելը, սակայն որովհետև կեղծ նամակագիրը չօշափում է Լուսաւորչի եկեղեցու լուսաբարներից մինի անձնաւորութիւնը, ուստի հարկաւոր համարեցի թէ ձեզ և թէ ընթերցողին տեղեկացնել այդ մասին, որպէս զի իմանաք յիշեալ նամակի կեղծ լինելը և ճանաչէք թէ նրա գրողը ինչ հոգու տէր մարդ պէտք է լինի։»

—

Մեզ խնդրում են տպագրել հետևեալ նկատողութիւնը. «Բոլոր հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների վրա պարտաւորութիւն է դրած ստանալ էջմիածնում հրատարակվող «Արարատ» ամսագիրը։ Այդպիսի կարգադրութիւն անողները իրանց այդ զարմանալի կարգադրութիւնը պատճառաբանում են նրանով, որ «Արարատի» մէջ տպագրվում են դպրոցներին վերաբերեալ զանազան այնպիսի տնօրինութիւններ և տեղեկութիւններ, որոնց հետ անպատճառ պէտք ծանօթանայ հայոց դպրոցի ամեն մէկ վարժապետը և վարժուհին։ Սակայն այդ սխալ միտք է։ Մի կողմ թողնելով, որ «Արարատը» իր ներկայ խմբագրութեամբ ոչինչ մանկավարժական գիտելիքներ և մանկավարժական պիտանի յօդուածներ չէ կարող տալ մեր դպրոցներում գործողներին, մի կողմ թողնելով, որ այդ կրօնական ամսագրի մէջ ոչինչ կարդալու բան չեն գտնում նոյն իսկ մեր քահանաները, որոնք վաղուց պարտաւորված են այդ ամսագիրը ստանալու, չէ կարելի չը նկատել, որ վերոյիշեալ նպատակին հասնելու համար բաւական է, որ հայոց ամեն մի դպրոց ըստանայ «Արարատը», ինչպէս որ անվում է կառավարչական դպրոցներում։ Երբ դպրոցը կըստանայ մի օրինակ «Արարատ», այս արդէն բաւական կը լինի անկասկած նոյն դպրոցի մէջ գործող վարժուհիների և վարժապետների համար։ Իսկ ստիպել, որ մի և նոյն դպրոցի մէջ պաշտօն վարող հինգ, տասն, կամ տասն և հինգ վարժապետներ և վարժուհիներ, ամեն մէկն էլ առանձին առանձին ստանան այդ կրօնական ամսագիրը, ոչինչ ուրիշ միտք և նպատակ չունի, եթէ ոչ որքան կարելի է շատ չորս բ ո ւ բ լ ի ներ ստանալ առանց այն էլ նիւթապէս շատ նեղված հայ մանկավարժական ասպարիզում գործողներից։ Միթէ «Արարատի» խմբագիրը ուրիշ աւելի լաւ միջոց չը կարողացաւ գտնել «Արարատը» շատ տարածելու համար։»

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են։ «Այս ձմեռը այնքան ցուրտ եղաւ մեզ մօտ և ցրտերը մինչև այժմս էլ դեռ այնպիսի յամառութեամբ են շարունակվում, որ անցեալ նոյեմբերի սկզբից մինչև այսօր (ապրիլի 13-ը), համարեա ամբողջ վեց ամիս, վառարանները կարսում դեռ շարունակում են վառվել։»

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը նշանակել է Թիֆլիսի բաղարներում ծախվող մթերքների վրա հետևեալ տակսա, որ այժ պիտի ունենայ ապրիլի 16-ից մինչև մայիսի 1-ը։ Կրուպչատկա ալիւրից թխած հացի ֆունտը առաջին տեսակի արժէ 5 կոպ., ցորենի ալիւրից, առաջին տեսակի՝ 3 կոպ., երկրորդ տեսակի $2^1/_2$ կոպ., նոյն ալիւրից թոնրի մէջ թխած հացի ֆունտը առաջին տեսակի արժէ 5 կոպ., երկրորդ $3^1/_2$ կոպ., երրորդ 3 կոպ., կրուպչատկա ալիւրից խառն ցորենի ալիւրի հետ թխած լաւաշների ֆունտը առաջին տեսակի արժէ 5 կոպ., երկրորդ տեսակի 4 կոպ.։ Ցաւարի մսի ֆունտը առաջին տեսակի արժէ 9 կոպ., երկրորդ տեսակի՝ 8 կոպ., սուկի 16 կոպ., ոչխարի մսի ֆունտը 12 կոպէկ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են։ «Վերջին տարիներս Մոսկվայի լ օ ւ բ օ չ ն ի կ ասված ժողովրդական դրավաճառ-հրատարակիչները սկսել են լոյս ընծայել մի շարք «Բժշկարաններ», որոնցով իբր թէ կարելի է առանց բժշկին դիմելու՝ բըժշկվել զանազան վիներական ցաւերից։ Այդ տեսակ գրքեր, ինչպէս վկայում են ռուս գաւառական թերթերը, բաւական արագ են տարածվում ժողովրդի տգէտ խաւերի մէջ, դժբաղդացնելով հազարաւոր երիտասարդներին։ Մենք ընդդէմ չենք բժշկական ժողովրդական զանազան գրքերի հրատարակելուն, բայց ընդդէմ ենք ագերիատների այդ

բոլոր հնչիւնները, բայց հետզհետէ հոսոսութեան այն ծիծաղելի աստիճանի հասան, որ ուզեցին բոլոր օտար թէ հին և թէ նոր բառերը փոքր առ փոքր հ ա յ ա ց ն ել.... Մի ժամանակ այնտեղ հասան ուսումնական սուրբ հայրերը, որ ֆրանսիացի երեելի գիտնական Laplace-ի անունը Ղ ա փ ղ ա կ էին գրում, Lamartine,—Ղ ա մ ա ր դ ի ն ո ս էին գրում և այլն։ Բայց բաղդաւորապէս շուտով թողեցին այդ գրութեան ձևը, եթէ ոչ՝ եթէ մինչև այսօր շարունակէին այդպէս գրել, պէտք է ֆրանսիացի երեելի վիպագրող Zola-ի ազգանունը Զ ո ղ ա գրէին, իսկ գերմանացի յայտնի սոցիալիստ Lassalle-ի ազգանունը՝ Ղ ա ս ա ղ գրէին (քիչ է մնում ղ ա ս ա բ ասէին), ֆրանսիական Lille քաղաքը պէտք է Ղ ի ղ արտասանէին.... և այլն։

Իսկ եթէ մի օր Եւրոպայում յայտնվեր մի որ և է նշանաւոր մարդ Sarsalle ազգանունով, Մխիթարեան ուսումնականները նրանից անպատճառ Ս ա ր ս ա ղ կը չինէին....

* * *

Առհասարակ անպատկառ կերպով վերաբերվել դէպի ամեն բան,—հայի յատկանիշն է։ Հայը, առհասարակ ոտնակոխ է անում ամեն բան, ինչ որ իրանն է, բայց, ի ցոյց օտարներին, արտաքուստ աշխատում է օտարների առջև երևան հանել իր չեղած լաւ կողմերը։ Ցարդել, պատուել, մեծարել օտարներին, հանդիսաւոր կերպով նրանց ընդունել և նրանց ցոյց տալ թէ միմեանց մէջ ամեն բանում համերաշխ, սիրով ենք և միաբան

տեսակ «Բժշկարանների» հրատարակելուն։ Վենեբական ախտերի հետ քիչ թէ շատ ծանօթ մարդը կը վկայէ այդ ախտերի բժշկվելու ահագին դժուարութիւնը, որի առջև շատ անգամ անզօր են հանդիսանում նոյն իսկ գիտութեան տոկուն ջանքերը, ուր մնաց տալ բժշկական գիտութեան հետ անծանօթի ձեռքը «Բժշկարան» ասված գրքերը, որոնք մեծ մասամբ լի են լինում գիտութեան վերաբերեալ ամենատարրական սխալներով։ Եւ այդ գրքերով նա պիտի բժշկվի իր հիւանդութիւնից.... Այդ գրքերի ընթերցանութեան հետևանքները առհասարակ շատ անմխիթար են լինում։ Զգուշացնում ենք և մեր հայ թարգմանիչներին «լուբօչնիկների» այդ վնասակար և վտանգաւոր գրքերի հայերէն թարգմանութիւնից։ Մեր երիտասարդ թարգմանիչները այդ տեսակ ագիտատների այլանդակ բժշկական գրուածները գուցէ կընդունեն ուսումնական ժողովրդական հեղինակութիւնների տեղ։»

—

Ապրիլի սկզբին Բագուի նահանգական դատարանի բաժինը Շամախում քննեց մի գործ, որը բաւական հետաքրքիր է, և որի մասին «Новое Обозрѣніе» լրագրին գրում են Շամախուց հետևեալը։ Մեղադրվում էր չէյխ Ահմէդ-փաշա Մօլլա-Մամէդ-օղլի կողոպտման մէջ։ Շեյխ-Ահմէդ-փաշան հռչակաւոր չէյխ-Էիւբի թոռն է, որը Շիրվանի խանութեան ընկնելուց անմիջապէս յետոյ չէյխ դարձաւ և իր շուրջը հաւաքեց կաբրիստանեան մասի թափառական սունիտներին։ Շեյխ-Էիւբ թաղված է այն ճանապարհի վրա, որով թափառական-կաբրիստանցիները իւրաքանչիւր տարի գնում են լեռնային արօտատեղերը։ Նրա գերեզմանի վրա մի արձան է կանգնեցրած։ Նրա անդրանիկ որդին, չէյխ-Էիւբի ժառանգը, կատարելապէս ապուշ էր, բայց չը նայելով դրան, մեծ յարգանք էր վայելում իր հօր համախոհների մէջ։ Այդ ժառանգը, որը չը նայելով իր անդրադիտութեան, Մօլլա-Մամադ էր անուանվում, տարին երկու անգամ, երբ թափառականները բարձրանում էին լեռները և երբ նրանք այնտեղից իջնում էին, նստելով իր հօր գերեզմանի վրա, առատ հունձ էր հաւաքում «նազր» (նուիրաբերութիւն)։ Իսկ Մօլլա-Մամէդի ժառանգն էր նրա անդրանիկ որդին, Ահմէդ-փաշան (չէյխի ժառանգութիւնը ստանում է ցեղի մէջ աւագագոյնը), որը կարճ ժամանակում ահագին հարստութիւն դիզեց։ Այդպէս, օրինակ, հինգ տարի առաջ նա մօտ 50,000 ռուբլի ունէր պետական բանկում, 600 ուղղ ունէր, համարեա նոյնքան ձիեր և մօտ 10,000 գլուխ տաւար։ Կաբրիստանեան գաւառամասում (այժմեան կաբրիստանեան պրիստավութիւն) 2—3 արօտատեղեր ունեն չիները, որոնք առաջվայ ժամանակները սաստիկ ճնչվում էին սունիներից։ Իսկ վերջին ժամանակներում, Պարսկաստանի ազդեցութեան շնորհով, չիա պարսիկների տարրը ըստ կսեց զօրեղանալ Շամախում և նրա շրջականերում։ Խանների ժանանակները Շամախում չիաներ համարեա չը կային, իսկ այժմ Շամախում չիաները բաղմաթիւ են սուններից։ Ահա չիաների այդ բաղմանալն էր պատճառ, որ թափառական չիաները գլուխ բարձրացրին և մեղադրեցին իրան չէյխ Ահմէդ-փաշային, որին նահանգական դատարանը տաժանակիր աշխատանքներին դատապարտեց։ Այդ գործի քննութեան օրը, Շամախու և նրա շրջականների սուններները սաստիկ յուզված էին, բայց սունի տարրի ներկայացուցիչների յորդորների շնորհով անկարգութիւններ չեղան։ Դատարանի վճիռը կարդալուց յետոյ, միւրիդները խնդիրը ներկայացրին դատարանին արձակել նրան երաշխաւորութեամբ. նրանք մինչև անգամ 50,000 ռուբլի գրաւական էին առաջարկում, բայց բոլորը ի զուր. դատարանը չէյխին բանտարկեց։»

—

Թիֆլիսի ռուսաց լրագիրները հաղորդում են, որ պօրուչիկ Պէկարսկու սպանութեան մէջ մեղադրվող տիկին Նիկիֆորովա, դատաստանական քննիչի որոշման համաձայն, ապրիլի 17-ին բանտարկվեցաւ Մէտէխի բերդում։

—

Պետերբուրգում, որպէս հաղորդում են «Пет. Лист.» լրագրին, մտադրութիւն կայ մի նոր ամսագիր հրատարակել, որի նպատակը կը լինի հրէաների և Ռուսաստանում նրանց դրութեան ուսումնասիրութիւնը։

—

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ Թիֆլիսի դատաստանական պալատը որոշեց երաշխաւորութեամբ ազատել Ալէքսանդր Խօսրօեվին ձերբակալութիւնից այն պայմանով, որ անմիջապէս ներկայացվի պալատին 15,000 ռուբլի գրաւական։

—

Թիֆլիսի քաղաքային դումայի ապրիլի 18-ի նիստում երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան Թիֆլիսի Մուշտայիդ կոչված այգին ջրելու մասին։ Զայնաւորներից ոմանք պնդում էին, որ այգու ջրելը քաղաքին կը նստի տարեկան ոչ աւելի քան 300 ռուբլի։ Դուման ձայների մեծամասնութեամբ մերժեց առաջարկութիւնը, հիմնվելով այն իրողութեան վրա, որ այգին չը գընվելով քաղաքի վարչութեան տակ, քաղաքը ոչինչ պարտաւորութիւն չունի ջրել այդին։ Այդին կառավարութեան սեփականութիւն է, մինչև այժմ չէ յանձնված քաղաքին, և տուած է կապալով պ. Անդրօնիկովին, ուրեմն, պնդում էին ձայնաւորները, թող պ. Անդրօնիկով ջրէ այդին։

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ պ. Բալաբէգ Մէլիք-Ղարագեօզեանցին Թիֆլիսի հայոց կօնսիստորիան արդէն հաստատել է Քամոյենց եկեղեցու երեցփոխ։ Նոր երեցփոխը կատարեալ իրաւունք ունի այժմ նախկին երեցփոխ պ. Գէորգ Աքիմեանցից եկեղեցու հաշիները պահանջելու։

—

Ռուսաց ղերասանական խմբի կառավարիչ պ. Ֆօրկատի մեծ պատրաստութիւններ է տեսնում ներկայացնելու Զատկից յետոյ բանկի թատրոնում հռչակաւոր մի ֆէէրիա «ճանապարհորդութիւն աշխարհի շուրջ 80 օրվայ ժամանակամիջոցում» վերնագրով, հեղ. Ժիւլ Վէրնի։ Այդ ֆանտաստիական ներկայացումը տուել են առաջին անգամ Փարիզում, ուր կրկնել են 600 անգամ։ Ռուսաստանում նմանապէս նա միշտ մեծ աջողութիւն է ունեցել։ Ներկայացման ժամանակ, որը տևում է մի քանի ժամ, շուարված հանդիսականի առաջ անցնում են երկրագնդիս համարեա ամէն մի մասի դիրքը, թէ նրա բուսեղէնը, թէ բնակիչները, թէ գազանները և այլն և այլն։ Երևում են ահագին չոգենաւեր, երկաթուղու գընացքներ, փղի վրա ճանապարհորդութիւն և այլն։ Ինչպէս ասում են այդ հետաքրքիր ներկայացումը, որը լինելու է ապրիլի 25-ին, նստելու է պ. Ֆօրկատին 4000 ր.։ Մասնակցող անձանց թիւը հասնում է 240։ Աւելի դիւրըմբռնելու համար ներկայացման միտքը, անտրը-պրէնիօրը կազմել է նրա բովանդակութիւնը երեք լեզուներով՝ ռուսերէն, հայերէն և վրացերէն։

—

Լսում ենք, որ պ. Աւ. Արասխանեան թոյլատրութիւն է խնդրում Թիֆլիսում հայերէն լեզուով մի ամսագիր հրատարակելու և ամսագրի հրատարակութիւնը ապահովելու համար մտադրութիւն ունի կազմել ակցիօներական ընկերութիւն։

—

«Ընտանեկան վիշտ» վերնագրով ներկայ թւականին Շուշում լոյս տեսած մի գիրք այս օրերս ստացվեց մեր խմբագրութեան մէջ։ Գրքի վրա տպված է հետևեալը. «Պատմական վէպ, պարսկահայ կեանքից» հեղինակութիւն ումն Շաւարշի։ 208 փոքրադիր երեսից բաղկացած այդ գրքի մէջ պատմվում է, թէ ինչպէս մի օր, Պարսկաստանի հայաբնակ գիւղերից մէկում, Քեարիմ-բէկ անունով մէկը վրէժխնդրութիւնից փախցրեց մի հայի փոքրիկ Շուշան անունով աղջիկը, թէ ինչպէս այդ աղջիկը ընկաւ մի խանի ձեռք, և թէ ինչպէս, ի վերջոյ հաւատարմութեամբ յաղթեց ամենքին և ազատութիւն ստացաւ։ Անհասկանալի է, թէ ինչու հեղինակը այդ թեթև և գործող անձանց, դէպքերի ու նկարագրութիւնների կողմից որ և է պատմական պայմաններին չենթարկված գրուածքը «Պատմական վէպ» է անուանել. կամ գուցէ ինքը չէ հասկանում թէ ինչ ասել է պատմական վէպ, և կամ թէ ընթերցողին շատ միամիտ է կարծել. երկու դէպքումն էլ նա միանգամայն դատապարտելի է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Զատկի տօների պատճառով, ինչպէս միշտ, դիպլօմատիական շրջաններում նկատվում է մի տեսակ հանդարտութիւն։ Այդ հանդարտութիւնը ներկայումս պէտք է աւելի վերագրել քաղաքական հարցերի ընթացքին, քան թէ այն խաղաղասիրական մտադրութիւններին և ցանկութիւններին, որոնք արտայայտվում են քրիստոնէական այդ ամենամեծ տօնի առիթով։ Իսկ քաղաքական հարցերի այդ ընթացքը խոստանում է մի քանի ժամանակից յետոյ նոր տեսարան բանալու մեր առջև։ Ֆրիդրիխ կայսրի հիւանդութեան հարցը, Բուլանժէի գործերը, և բալգարական խնդիրը, ինչպէս երևում է, շուտով երկրորդական տեղը կը բռնեն։ Ֆրիդրիխի հիւանդութեան հարցը, հիմք կայ կարծելու, մի քանի ժամանակից յետոյ, կը կորցնի իր այժմեան առաջնակարգ նշանակութիւնը, որովհետև այդ հիւանդութիւնը այնպիսի շրջանում է, որ շուտով պէտք է մի վճռողական վախճան ունենայ. կամ աջ կամ ձախ։ Ցաւալի կը լինի, ի հարկէ, եթէ այդ համակրելի մարդու կեանքի թելը կտրվի շուտով, բայց դրա հետ միասին՝ Գերմանիայի մէջ տիրապետող այժմեան ներքին կուսակցական մրցումները մի որոշ դոյն կը ստանան, և երբ թագաժառանգ Վիլհելմ գահը կը բարձրանայ, կարելի կը լինի դէթ որոշակի ասել, թէ ինչ է սպասում Գերմանիային և Եւրոպայի ընդհանուր խաղաղութեան։

Երկար չի ապրի և Բուլանժէ. մեր խօսքը, ի հարկէ, նրա քաղաքական գործունէութեան մասին է, ըստ որում նախկին մինիստրը այնքան առոյգ և առողջ է, որ գուցէ երկար տարիներ կարող կը լինի հաստատամտութեամբ ծառայել ֆրանսիական միապետական պրինցիպների շահերին։ Փարիզից ստացված բոլոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ դէպի գեներալ Բուլանժէ այժմ ընդհանրապէս անտարբերութիւն է արտայայտվում հասարակութեան կողմից. նրանով այժմ ոգևորվում են ամբոխի մի փոքրիկ մասը, և մի քանի կուսակցութիւնների փոքրաթիւ ներկայացուցիչները։ Բուլանժէ այս քանի օրերս, իբրև պատգամաւոր, եկաւ պատգամաւորների ժողովը, և ի մեծ զարմանս նրա կողմնակիցների՝ նրա այդ գալը ոչինչ տպաւորութիւն և ոչինչ ցոյց համարեա առաջ չը բերեց։ Մի խօսքով, գուցէ մի երկու ամսից յետոյ,—հիմք կայ կարծելու,—Բուլանժէի անունը կանհետանայ Փարիզի փողոցներից էլ, և այն ժամանակ ֆրանսիական հանրապետութիւնը կը գրաւի Եւրոպայի ուշադրութիւնը այն մեծ բէֆօրմների հարցերով, որոնք գրված են այժմեան մինիստրութեան առջև։

Այդ տեսակ ներքին բէֆօրմների հարցերով է մշակել աշխարհաբար լեզուն, մենք բոլորս էլ ուրիշ բան չենք, եթէ ոչ թուղթ մրոտողներ, լեզու աղաւաղողներ....

Այդպիսով հայը պատրաստ է իրան ստորացնել, իրան խայտառակել, ինքն ամեն տեսակ բիծ կամ արատ յանձն առնել,—միայն թէ իր եղբայրակցին, իր պաշտօնակցին, իր նմանին ձեր աչքում ստորացնէ, խայտառակէ, նրա վրա բիծ, ստուեր, արատ գցէ։

Այդ ինձ յիշեցնում է ձուկ ծախող հրէայի մասին հետևեալ անէկդոտը։

Մի հրէայ փողոցում ձուկ էր ծախում։ Մի առնող մօտենում է, ձեռք է առնում ձուկը, հոտ է քաշում և բացականչում է.

—Անպիտան հրէայ, քո ձուկը հին է, փտած է, հոտում է....

—Ոչ, պարոն ջան, ինչպէս կարելի է, դուք սխալվում էք, այդ ձեզ այդպէս է թվում,—այդ ձուկը չէ որ հոտում է, այդ ես եմ հոտում։

*
* *

Ամեն հայն էլ պատրաստ է հրէայի պէս, ինքն իրան հոտած անուանել, միայն այն զանազանութեամբ որ հրէան պատրաստ է իրան հոտած անուանել միայն իր ապրանքը սաղացնելու համար, իսկ հայը, սև նախանձից թելադրվելով, պատրաստ է իրան հոտած անուանել, միայն թէ իր եղբայրակիցը, իր նմանը նոյնպէս հոտած համարվի։

*
* *

Իսկ ի ցոյց ուրիշներին, օտարներին՝ ամեն բան պատրաստ ենք անելու։ Ամեն բան ցուցամոլութիւն է մեզանում։

Մենք պատրաստ ենք մեր փողով նոյն իսկ հեռաւոր հայ զէյթունցիներին օգնելու,—միայն այն պատճառով որ նրանք թէև հայ են, բայց շատ հեռու են մեզանից. իսկ մեր քաղաքում բնակվող անթիւ, անհամար չքաւորներին, աղքատներին, կտոր հացի կարօտներին,—ամենևին չենք օգնի։

Նոյն հարուստ Թիֆլիսեցի մարդը, որ մի յայտնի գումար կը ստորագրէ (լոկ ցուցամոլութեան զգացմունքից դրդված) մի որ և է բարեգործական նպատակով (մանաւանդ օտարներին օգնելու), ինքն հարուստ, անզաւակ, իր կնոջ հետ երկու չոր գլուխ լինելով,—մի կօպէկ չի տայ իր հարազատ քրոջ որդիներին, որոնք վերջին ծայր աղքատութեան մէջ են, մին միւսի ետևից քաղցից և բարակացաւից մեռնում են, ամենաչնչին օգնութեան անգամ կարօտ լինելով....

Ինչի.... որովհետև իր մօտիկ ազգականներին օգնելը ոմ կիմանայ, ոմ դրա համար կը փառաբանէ, կը մեծարէ հային.... ոչ ոք։ Իսկ հայը փառասէր է....

Հային հարկաւոր է միայն արտաքուստ փայլ, ունայն փառք (որ անբաժան է սև նախանձից) նրան հարկաւոր է միայն ցուցամոլութիւն....

ԱՍԻԱՑԻ

Հայի մէջ այն աստիճան խոր արմատներ է գցել, արիւն և մարմին է դարձել հայի հռչակված սև նախանձը, որ երբ որ հայը լսում է թէ իր ներկայութեամբ իր եղբայրակից, պաշտօնակից մի այլ հային գովում են,—նա պատրաստ է լինում, եթէ ուրիշ միջոց չը կայ, իր անձն էլ ստորացնել, իր վրա էլ որ և է արատ վերցնել, միայն թէ դրանով իր եղբայրակցին, իր պաշտօնակցին ձեր աչքում ստորացնէ....

Փորձեցէք մի հայ բժշկի երեսին ասել թէ այս ինչ հայ բժիշկ շատ լաւ գիտէ իր արհեստը....

—Է՛հ, ինչ էք ասում, կը պատասխանէ նա ձեզ, ինչ արհեստ, ինչ բժշկութիւն.... Մենք բոլորս անում ենք ինչ որ կարող ենք, բոլորս էլ ձախ ձեռքով ենք սովորել... Մթթէ մեզ պէս ազգի միջից կարող է դուրս գալ մի երևելի բժիշկ... Վերջապէս ինքն բժշկականութիւնն էլ այնպիսի մի անհաստատ արհեստ է, որ ամեն բան աջողութիւնից է կախված....

Փորձեցէք մի հայ ադվոկատի առջև գովել մի այլ հայ փաստաբանին....

—Է՛հ, ինչ էք խօսում պարոն.... Մենք ադվոկատներս բոլորս էլ դատարկախօսներ ենք, ամեն համոզմունքից զուրկ մարդիկ ենք....

Փորձեցէք մի հայ հեղինակի առջև գովել մի այլ հայ հեղինակին, ասելով թէ այդ վերջինին բաւական աջողվել է մշակել նոր աշխարհաբար լեզուի մի քանի ձևերը....

—Է՛հ, ինչ էք ասում, պարոն, կը պատասխանէ ձեզ հայ հեղինակը, մթթէ մենք ընդունակ ենք,—այդ մեր բանն է։ Մի անգլիացի գիտնական կը գայ Թիֆլիս,—և ահա մենք նրան ճաշկերոյթ ենք տալիս և ցոյց ենք տալիս նրան, որ միմեանց մէջ շատ համերաշխ ենք։ Մի վրացի կը գայ Կ. Պոլիս,—և պօլսեցիք նրան այնպիսի հանդիսաւոր կերպով կընդունեն, որ վրացին զմայլված, հիացած կը մնայ։

Բայց իրանց մէջ հայերը եսական են և վերին աստիճանի նախանձոտ են։ Հայը միմիայն մի որ և է օտարի առաւելութիւնը կը ճանաչի, իսկ երբ որ հայը մի ուրիշ հային է գովում,—դա անկեղծ չէ, դա շատ կասկածաւոր է լինում.... Հայը գովում է մի ուրիշ հային միայն երեք դէպքերում. 1) երբ գովաբանածը մի ստոր արարած է, որ գովաբանողի արբանեակ է և նրա հլու հրպատակ ծառայ, ստրուկ է հանդիսանում. 2) երբ հայը ուրիշ հայի հետ որ և է դրամական հաշիներ ունի և 3) երբ հայը հայից որ և է ակնկալութիւն ունի։

Բայց անկեղծ, անկողմնապահ կերպով ճանաչել ուրիշի արժանաւորութիւնը, այլ ևս չեմ ասում առաւելութիւնը, գերազանցութիւնը,—այդ տեսակ բան հայը հայի վերաբերմամբ երբէք չի անի, այլ շատ շատ, գուցէ այն էլ կեղծաւոր կերպով, կանի օտարի վերաբերմամբ։

Եւ երբ մի հայ մի այլ հային գովում է, նրա ջերմ պաշտպան է հանդիսանում,—իմացէք որ մեծ մասամբ երկուսի մէջ որ և է նիւթական շահեր կան։

*
* *

զբաղված և Անգլիան, ուր համայնքների ժողովի վերջին նիստերը յիրաւի որ հետաքրքրական են իրանց յարուցած հարցերով. մէկը միւսի ետևից համայնքների ժողովի քննութեան ենթարկվեցան այն մի չարք նշանաւոր հարցերը, որոնց մասին իր ժամանակին հաղորդել ենք։ Մեծ-Բրիտանիայի արտաքին քաղաքական գործունէութիւնը այժմ աւելի քան երբ և իցէ անդորր կերպարանք է առել, թէև, դուցէ ժամանակաւորապէս, այնպէս, որ թիւրքաց կառավարութիւնը համոզված է, որ Անգլիան այժմ չատ է զբաղված հայոց հարցով. իսկ այդ չատ զբաղվելը երևան եկաւ նրանով, որ կ. Պոլսի անգլիական դեսպանը մի անգամ միայն դիմել է Բ. Դրանը, Սալիսբրիի ստացած, այսպէս ասած, հայկական յիշատակագրի առիթով....

Դուցէ Անգլիան մի քանի ժամանակից յետոյ աւելի չոչափելի կերպով կը խառնվի բոլգարական հարցի մէջ, որը մի քանի ժամանակից յետոյ նորից կարող է առաջնակարգ դիրք ստանալ, եթէ այժմ Բերլինում գտնվող անգլիական Վիկտորիա թագուհու ջանքերով Աւէքսանդր Բատտենբերգ ամուսնանայ Վիկտորիա իշխանուհու հետ, և զբրանից յետոյ՝ Բատտենբերգ իր մեծ կապերի վրա յոյս դնելով՝ աչք դարձնի բոլգարական գահի վրա։ Այդ գահը անկասկած նրա համար չատ գրաւիչ է, չը նայելով այն լուրերին, որոնք հաղորդում են, թէ Բատտէնբէրգ պաշտօնապէս ուզում է յայտարարել, որ հրաժարվում է բոլգարական գործերի մէջ խառնվելուց....

Աւստրօ-Ունգարիայի և Իտալիայի քաղաքականութեան մէջ նշանաւոր փոփոխութիւն անելու հիմք առայժմ չէ նկատվում. այդ երկու պետութիւններն էլ ընթանում են իրանց արդէն յայտնի քաղաքական ընթացքով։ Եւրոպական միւս փոքրիկ պետութիւնների քաղաքական կեանքի մէջ որ և է փոփոխութեան նշաններ չեն երևում, եթէ յիշելու չը լինենք այն ներքին յուզմունքները, որոնք առաջ են եկել Բալկանեան մի քանի պետութիւնների մէջ։ Մինիստրական փոփոխութիւն է սպասվում Թիւրքիայում, ուր այժմեան մինիստրութիւնը իր վրա է դարձրել Թիւրքաց միապետի բարկութիւնը այն պատճառով, որ այդ մինիստրութեան օրով հայոց հարցը այսքան սուր կերպարանք է ստացել։ Թիւրքաց միապետը՝ արևելեան սովորութեամբ՝ իր մինիստրութեանն է վերագրում երկրի մէջ պատահող իրան անհաճոյ երևոյթները, բայց տարաբաղդաբար փոխելով այժմեան մինիստրութիւնը, առաջ է կոչում մի այնպիսի մինիստրութիւն, որի անդամները արդէն յայտնի են, և որոնք անկարող կը լինեն լաւացնել երկրի դրութիւնը, և այդպիսով Թիւրքիայի ներքին կեանքը կը շարունակի ընթանալ այժմեան, արդէն յայտնի շաւղով....

Քաղաքական հարցերի և երևոյթների այժմեան ընթացքը այդպիսով ուրեմն մօտիկ ապագայում խոստանում է մի ուրիշ տեսարան, այժմեան յուզիչ խնդիրները այսպէս թէ այնպէս կը լուծվեն, և երևան կը գան թէ ներքին բեֆորմների չբրջանի և թէ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ այնպիսի խնդիրներ, որոնք այժմ երկրորդական են համարվում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից գրում են, որ Ֆրիդրիխ կայսրը կոմսի տիտղոս չնորհեց երեք լեհ պետական պաշտօնեաներին.—ամենքը նկատում են, որ դրանով կայսրը ցանկացել է յայտնել իր համակրութիւնը լեհացիներին։

—Ինչպէս հեռագրում են Փարիզից, Դերուլէտ ամեն ջանք գործ է դնում, որպէս զի Բուլանժէ ընտրվի «Հայրենասէրների միութեան» իսկական նախագահ։

—Մի քանի օր սրանից առաջ, Փարիզում մեծ ցոյց է եղել Բուլանժէի դէմ։ Ինչպէս գրում է «Post» լրագիրը, այդ ցոյցին մասնակցում էին 2,000-ից աւելի ուսանողներ, որոնք Բուլանժէի ներկայ ընթացքի կատաղի թշնամիներ են. ուրախալի է, ի հարկէ, որ երիտասարդութիւնը դէմ է այդ ինքնակոչ դիկտատորի հակակրելի գործողութիւններին։

—Անգլիական թագուհին, ինչպէս յայտնի է, Բերլին է եկել. նա իջել է Շարլոտտենբուրգում։ Իշխան Բիսմարկ տեսնվեցաւ թագուհու հետ։ Ինչպէս երևում է, Աւէքսանդր Բատտենբերգի ամուսնութեան գործը դլուխ պէտք է գայ, մանաւանդ որ այդ նպատակին հասնելու համար, ինչպէս անցեալ անգամ արդէն հաղորդեցինք, Բատտենբերգ մտադիր է պաշտօնապէս յայտնել, որ ինքը սրանից յետոյ հրաժարվում է բոլգարական գործերի մէջ խառնվելուց։

—Գլադստոն ներկայացրել է համայնքների ժողովին մի նախագիծ, որով առաջարկում է հարկ դնել ժառանգութեան վրա։ Այդ նախագծի մանրամասնութիւնները առ այժմ յայտնի չեն։

—Հիմնվելով վերջին տեղեկութիւնների վրա կարելի է ասել, որ Ֆրիդրիխ կայսրի առողջութիւնը առ այժմ վտանգաւոր դրութեան մէջ չէ այլ ևս։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թաւրանութեան վարժապետը մի դպրոցում դիմում է իր աշակերտներից մինին հետևեալ թըւաբանական խնդիր առաջարկելով նրան։

—Ութ հոգի աշակերտներ ունեն միասին 48 խնձոր, 32 դեղձ, 56 սալոր, 40 տանձ և 16 սեխ. ո՞րքան կը ստանայ ութ աշակերտներից ամեն մէկը։

—Ամեն մէկը փ ո ր ի ց ա ւ կը ստանայ, համարձակ պատասխանում է աշակերտը։

* * *

Մի տիկին վարձում է մի նոր ծառային։

—Դուք դիտէք սենեակների յատակները մոմով սրբել, այնպէս որ բոլորովին հարթ լինեն, հարցնում է նա ծառայից։

—Ինչպէս չէ, տիկին, հարցրէք իշխանուհի Մ.-ից, որի մօտ ես մի ամբողջ տարի կացել եմ.... Նրա տան մէջ իմ սրբած յատակները այնպէս հարթ էին, որ մի տարվայ ընթացքում հիւրերից հինգ հոգի սլկվելով յատակի վրա, իրանց ձեռք ու ոտք էին կոտրել և դրանցից երկուսը դրանից յետոյ երկար ժամանակ հիւանդանոցում էին բըժշկվում, իսկ մէկը մինչև անդամ մնաւ էլ իր ոտքը կոտրելուց։

* * *

Մի օրիորդ նկարում է մի պարոնի պատկերը։ Նրա կողքին նստած մի երիտասարդ հարցնում է նրան.

—Կարելի է իմանալ, օրիորդ, այդ ո՞ւմ պատկերն էք նկարում։

—Ես այն երիտասարդի պատկերն եմ նկարում, պատասխանում է օրիորդը, որի հետ չեմ պսակվի, եթէ դուք լինձ առաջարկութիւն կանէք։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՆՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի։ Այսօր հասաւ Պետերբուրգ Հեսսի ռուսաց դեսպան բարօն Իկսկիլլ։

ՐԷՎԷԼ, 19 ապրիլի։ Սառուցը որ և է արդելք չէ ներկայացնում նաւերի երթևեկութեան համար, այդ պատճառով նաւադնացութիւնը կարելի է բացված համարել։

ՓԱՐԻԶ, 19 ապրիլի։ Իզէրեան դէպարտամենտում եղած ընտրութիւնների ժամանակ Բուլանժէ ստացաւ 1,600 ձայն ընդդէմ 20,000 ձայնի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի։ Վիէննայի ռուսաց դեսպան իշխան Լոբանով-Ռոստովսկի ուղևորվեց Վիէննա։

ՎԻԷՆՆԱ, 19 ապրիլի։ Ռէյխսրատում տեղի է ունեցել սաստիկ վիճաբանութիւն ազգային լուսաւորութեան դէմ այն նախագծի առիթով, որով առաջարկվում է չէխական ուսանողներին պարտաւորեցնել հարցաքննութիւն տալ գերմանական լեզուից։ Բիւդժէտը չէ հաստատվում։ Մինիստրութեան դէմ տիրում է սաստիկ յուզմունք։

ՍՕՖԻԱ, 19 ապրիլի։ Պոպովի դատի հարցում մեղադրող իշխանութիւնը պահանջում է զրկել մեղադրեալին աստիճաններից և քանտարկել նրան 10 տարով։ Ասում են, որ միլիցիան դիտաւորութիւն ունի զինաւորված ուժով ազատել Պոպովին կալանաւորութիւնից։

ԲԵՐԼԻՆ, 19 ապրիլի։ Անցեալ գիշերը կայսրը կրկին հիւանդացաւ տենդով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 ապրիլի։ Թագաւոր Կայսրը, քննելով պետական խորհրդին ներկայացրած զանազան կարծիքներ հրէաների իրաւունքի մասին մի գիւղից դէպի միւս գիւղ տեղափոխվելու և այն հրէաների մասին որոնք մինիստրների յանձնաժողովի մայիսի 3-ի 1882 թ. հրատարակված կանոնադրութիւնից առաջ քաղաքներից և աւաններից դուրս գալով, դեսեղվել են գիւղերում, բարձրագոյն հրամայել բարեհաճեց. բացատրել թէ հրէաների տեղափոխվելը այն գիւղերից որտեղ նրանք ապրում էին մինչև 3 մայիսի, 1882 թ., դէպի ուրիշ գիւղեր՝ անպայման պէտք է արդելված համարվի և թէ այն հրէաներին, որոնք տեղափոխվել են հրէաների հաստատաբնակութեան շրջանում գտնվող մի գիւղից դէպի միւս գիւղ 1882 թ. մայիսի 3-ից յետոյ, մինչև ներկայ բացատրութեան հրատարակութիւնը՝ պէտք է թողնել մշտապէս այն գիւղերում, որոնց մէջ կը գտնվեն նրանք ներկայ հրամանի հրատարակութեան օրը։—Սենատի երրորդ դէպարտամենտը վերացվում է 1888 թուի առաջին կիսամեակում, արդարադատութեան մինիստրի անմիջական հայեցողութեան համեմատ որոշված ժամանակամիջոցում։

ԲԵՐԼԻՆ, 20 ապրիլի։ Կայսրի առողջութիւնը վտանգաւոր դրութեան մէջ է։ Երէկվայ ենթադրված բոլոր զեկուցումները յետաձգված են և Պոտսդամ գնալու պատրաստութիւնները դադարեցրած են։

ՓԱՐԻԶ, 20 ապրիլի։ Հանրապետութեան նախագահը երէկ Փարիզ վերադարձաւ։ Նախագահի Ելիսեան պալատը գնալու ժամանակ «կեցցէ Բուլանժէ» հատ հատ ձայներ էին լսվում, բայց այդ ձայները ծածկվում էին ի պատիւ Կարնօի արձակվող խլացուցիչ «կեցցէներով»։

ԱԹԵՆՔ, 20 ապրիլի։ Աթէնքի թիւրքաց դեսպանի յետկանչելը այստեղի մամուլը վերադրում է յոյն-թիւրքական յարաբերութիւնների լարվելուն։ Աւստրիական լրագիրների այն համոզմունքը, թէ այդ յարաբերութիւնների լարվելու պատճառը Նէլիդօվի Աթէնք գնալն է, արդար չէ, որովհետև տարաձայնութիւնները Նէլիդօվի գալուց առաջ սկսվեցան։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Ապրիլի 19-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. .	120 ր.	— ›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	58 ›	75 ›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	47 ›	25 ›
Ոսկի — արժէ — . .	— ›	— ›
Մաքսային կուպոններ — . .	— ›	— ›
Արծաթ — — — . . .	— ›	— ›
Բորսային դիսկոնտներ — .	— ›	— ›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 ›	37 ›
— — — — 2-րդ —	98 ›	75 ›
— — — — 3-րդ —	99 ›	25 ›
— — — — 4-րդ —	98 ›	75 ›
— — — — 5-րդ —	99 ›	— ›
— — — — 6-րդ —	— ›	— ›
Նոր 4% փոխառութիւն	83 ›	— ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	— ›	— ›
— — 2-րդ —	— ›	— ›
— — 3-րդ —	— ›	— ›
Ներքին 5% առաջին փոխառութ.	270 ›	— ›
— երկրորդ —	243 ›	50 ›
5½% բէնտա	102 ›	— ›
Ոսկեայ բէնտա	199 ›	75 ›
Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն	170 ›	75 ›
Նոր երկաթուղային բէնտա . . .	98 ›	62 ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	169 ›	75 ›
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . .	98 ›	— ›
5½% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի.	99 ›	50 ›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 ›	— ›
— — Պոլտավայի— —	101 ›	— ›
— —Պետ.Ցուլսկ.— —	101 ›	— ›
— — Կիևվի — —	101 ›	— ›
— — Մոսկվայի — —	102 ›	— ›
— — Բեսարաբ. Ցավր.—	100 ›	50 ›
— — Նիժ. Սամար. —	101 ›	— ›
— — Վիլնայի —	101 ›	— ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	— ›	— ›
— —Քութայիսի-18 և 43 տ.	— ›	— ›
Վոլժսկо-Կամսկի բանկի ակցիաները	709 ›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	272 ›	— ›
Ռիբինսկ-Վոլգովի ընկ.	91 ›	75 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	95 ›	— ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	95 ›	— ›
Օդէսայի — — .	94 ›	50 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օ. .	— ›	— ›

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, ապրիլի 28-ին, ԱՆԱՏՕԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԷԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, կ. Պոլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլիոշլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արծրունի գալլերէում, № 103. 4—4

ՀԻՒՐԱՆՈՑՈՒՄ ՏԷԼԻՑՕՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՏԱՍԻՈՆՈՒՄ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դլուգայա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն իսկ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՕՆՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՕՆԱՏԵՂԵՐԻ կողքին։ 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 բուբլի օրական վարձով։

ԿՕՆԴԻՏԷՐԻԱ և ՐԷՍՏՕՐԱՆ

ճաշեր 30 կոպէկից մինչև 1 բուբլի։

ՕՄՆԻԲՈՒՍՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար։

ԿԱՌՔԵՐԻ վարձելը չափաւոր գներով։ (Հ)

ՀԻՒՐԱՆՈՑՈՒՄ տացիում է «ՄՇԱԿ» լրագիրը

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

ВЪ ВАРШАВѢ

31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դլուգայա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն իսկ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՕՆՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՕՆԱՏԵՂԵՐԻ կողքին։ 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 բուբլի օրական վարձով։

КОНДИТЕРІА и РѢСТОРАНЪ

ճաշեր 30 կոպէկից մինչև 1 բուբլի։

ՕՄՆԻԲՈՒՍՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար։

ԿԱՌՔԵՐԻ վարձելը չափաւոր գներով։ (Հ)

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., домъ бывш. Шабурова).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ։

ՀԱՆՔԱՑԻՆ ԶՐԵՐ, Կովկասեան և արտասահմանեան, այս գարնանը չիչերի մէջ նոր ածված ՑԵՑԻՑ ԵՒ ՄԻԶԱՏՆԵՐԻՑ ՊԱՀՊԱՆՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ, Նաւթալին, քսմֆորա, ցեց ոչնչացնող հեղուկ, Պարսկական և Դալմաթիայի փոշի, և Բուրէլի անթեմ կոչված բոյսը։

ՕԴԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐ պրոֆէսօր ԿԻՏՏԱՐԱՑԻ, կարբոլացրած փոշի երկաթի արճասպով, որպէս ամենալաւ միջոց անմաքրութեան տեղերը խոտակելու համար, կարբոլեան թթուտ, մաքրված և չը մաքրված տեսակից, խլօրային կիր, ծծումբ, երկաթի արճասպ և Մարգանեցի կրկնաթթուտ։

93—100 (Հ.)

ԲԱԳՈՒԻ „ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ" ընդունում է՝ ամեն տեսակ գրքեր կօմիսիայով վաճառելու համար,

Հասցէն. БАКУ, „Каспійская Книжная Торговля" Седраку Тараянцу.

5—15 (Հ)

ՃԱԳԱՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ հրաւիրվում են մայիսի 3-ին, 1888 թուի, ժամը 12-ին, Առողջապահական լաբորատորիան այն անձինք, որոնք կը կամենան ձեռք բերել և հասցնել ճագարներ։ Պայմանների մասին կարելի է իմանալ յիշեալ լաբորատորիայում ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը կէսօրից յետոյ։ Առողջապահական լաբորատորիան գտնվում է Թիֆլիսի դեղավաճառական մագազինում, Կուկիայում, Իւնկերների դպրոցի մօտ։

3—3 (12, 16, 21)

Дозволено цензурою, Тифлисъ 20 Апрѣля 1888 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.